

ցուկ փսփսաց ականջիս. «Ձեր ազգը լմնցած է, գիտցած ըլլաս...»: Մեր քաղաքները, աւելի ճկուն, կերպեր ճարեցին յարմարելու համար թրքական բռնութեան, որ տեւողութեան յղացքէ մը կը մեկնէր ու հայկական խընդրին լուծումը վստահած էր տարիներու գումարի մը: Անոնք դժուար կը դառնային, կրնային դառնալ գեղերու առողջ բնազդին, որ կենսաբանական ամէնէն հզօր բջիջն է ժողովուրդներու կեանքին մէջ:

Սասո՞ւնը: Պատրանք չունեցաւ: Կռուի վարժ ժողովուրդի մը սրատեսութի՞ւնը: Մօտիկ ապագա՞ն: 915ը՞: Ո՛րը որ կ'ուզէք: Աւանդութիւններուն փոշիովը սնանող այդ լեռնականները, աղէտէն ետքը, զգացին փոփոխութիւնը: Թշնամի'ն, որուն գլուխը հասած էր իրենց լեռներուն ոտքին: Անոնք հասկեցան, թէ բան մը վերջացած էր ալ իրենց համար: Իրենց բոյներուն սեփականութիւնը: Ու սկսած՝ նո՛րը: Գեղացի՞ սա մարդիկը, որոնք շինականի մը հիմնական տարրը, հողը չունէին իրենց ոտքերուն ներքեւ: Շղթային առաջին թափերուն, գրաւած իրենց արտերուն կսկի՞ծը, թէ անհրաժեշտ կահը անմասն իրենց խրճիթներուն անհաստատ բախտը ունէին սգալու, քանի որ այդ շղթային ոտքին տեսանելի էին սեւ կէտերը, հետզհետէ խոշորցող, կամեր-կամեր գլուխ կապելու, ցրուած դեղնաւուն հողերուն, անկէ՝ դէպի սարերը: Եկողը թո՛ւրքն էր: Ու դարը քսաներորդ: Դուք ճշդեցէք դարը թուրքին: Հիմա, արեւմտեան ազգերու օրինագիրքը երկու թեւով ցուցադրող ու աճապարող մարդերն էին ասոնք, որոնք Սասնոյ սարերը չուլլուած ատեն, արիւն կը լզէին իրենց մարմինին մէկ կէտէն քաղուած, ախորժակ սրելու սրբազան ցանկութեամբ: Հարիւրով էջեր անբաւական են տեղադրելու անգթութիւնները սա մարդոց: Հիմա, տողերուն հետ, կը փռուի աչքիս պատկերը անոնց, երբ ճամբու սառած պզտիկները կը ծակեն գլուխներէն, հրացանին փողովը: Ու կրակին դէմ հրդեհուած հիւղակին անդամալոյծ ծերունի մը կ'եփեն, ողջ-ողջ: